ԲՅՈՒԼԵՏԵՆ

ՀՈՒԼԻՍ 2024թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հուլիսին գումարվել է Պալատի խորհրդի 1 նիստ՝ 18.07.2024թ.ին:

Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած կազմակերպությանը՝ «Աուդիտ Պրո» ՓԲԸ-ին և 3 ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի անդամ «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու, Պալատի անդամ «Կոնտռոլ Սթար» ՍՊԸ-ի՝ դիմումի համաձայն անդամակցությունը դադարեցնելու մասին որոշումները:

Նիստի ընթացքում հաստատվել են նաև Պալատի խորհրդի 26.12.2022թ. N 52-Ա և Պալատի խորհրդի 14.12.2023թ. N 32-Լ որոշումների փոփոխությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողովը գումարել է 4 նիստ՝ 04.07.2024թ., 17.07.2021թ., 25.07.2024թ. և 29.07.2024թ., որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում շնորհել ընդհանուր թվով 12 անձանց և հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Անդամակցության հանձնաժողովը գումարել է մեկ նիստ՝ 24.07.2024թ.-ին: Նիստում, ամփոփելով Պալատին անդամակցության համար ստացված դիմումների փորձաքննության արդյունքները, հանձնաժողովը որոշել է առաջարկել Խորհրդին՝ հաստատելու 3 անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

17.07.2024թ.-ին տեղի է ունեցել **ՇՄԶ՝ «Ռիսկերի կառավարում ֆինանսական հաշվետվություններում»** թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը:**

24.07.2024թ.-ին տեղի է ունեցել **ՇՄԶ՝ «Տրանսֆերային գնագոյացում»** թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**



30.07.2024թ.-ին տեղի է ունեցել ՇՄՁ՝ «Շահութահարկ, հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր Լեռնիկ Հարությունյանը:

Որակավորման քննություններ

2024թ. հունիսի 24-ից մինչև հուլիսի 2-ը տեղի են ունեցել Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի քննությունները, որին մասնակցել են 655 անձ: